

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ ՄՇՈՅ ԱՌԱՔԵԼՈՅ ՎԱՆՔԻ

Ա. ՍՈՒՐԲ ԽԼԻՃ ԱԼԵՏԱՐԱՆ

Միջադեր, մագաղաթեայ բոլորագիր: Իւրաքանչիւր էջ ունի երկսիւնակ (որու մեծութիւնն է $0,16 \times 0,11$ մէթր). իւրաքանչիւր սիւնակն՝ 19 տող, և իւրաքանչիւր տողը՝ 11-14 տառ:

«Ս»ի փոխարէն «աւ» գրուած է: Տառասխալ չունի: Յատուկ անուանց սկզբնագրերը հասարակ գրով գրուած են:

Ոսկեզօծ են բոլոր խորանները (թուով 14), պատկերները (թուով 4), լուսանցապատկերները (թուով 17), չորս աւետարաններու Ա, զարդագիր էջերն և անոնց հրեշտակակերպ, կապկակերպ, ցլակերպ և արծալակերպ սկզբնագրեր ու նաև բոլոր գլխոց լուսանցազարդերը, թռչնագրերը, զարդագրերը գլխագրերն ու Ա. տողերը:

Այս նկարներուն ամենէն նուրբ և գեղեցիկ նկարն է Մատթէոսի Աւետարանի խորանի քառորդ արծաթի մեծութեամբ բոլորակը, յորում՝ ներկայացուցած է գառն Աստուծոյ և Անոր Ծնունդն, Թաղումն, Յարութիւնն, և այլն:

Մամբրէ սրբազան ասոր մօտն ալ բան մը գրած է.— «Ընքանչեւի նկար, որ ի լուսաւոր կարծեալ դարուս չտեսի: Մամբրէ վարդապետ Մամիկոնեան Տարօնցի:

Յիշատակարան նոյն Ալետարանի.—

«Փառք անմահ և անվախճան փառաց թագաւորին... աստուածամուկ բանից արժանի արար զիմս անարժանութիւն: «Քանդի սկսեալ կատարեցի զգիրս աւեսանուն, ի թուականիս հայոց 22Դ (774+551=1325), ի թագաւորութեան հայոց բաւրեպաշտի չորրորդ Ղևոնի, որդւոյ Հայոց Աւշնի և ի պարոնութեան հայոց Աւշնի բարեպաշտի և աստուածասիրի: Եւ ի հայրապետութեան Տեառն Կոստանտեայ լամբրունեցւոյ ի մայրաքաղաքիս Սիս, ընդ հովանեաւ սուրբ նշանիս ձեռամբ մեզ զաւոր և անարժան սուտ անուն քահանայի Սարգսի, ոսկովն և «ամենայն զարդուք որ կայ ի սուրբ աւետարանս»:

Սոյն Աւետարանը Խլիճ կամ Ղըլիճ անուանուած է մականունումը նուիրողին, որ է «Դաւիթ եպ. մականուն Ղըլիճ», որ գնած է զայն ՊԾԻ (857+551=1408) թուականին Աշոտ, ի Տաւրանտ անուն գիւղի—(ի Կիլիկիա), աշխարհական երէցէ մը:

Բ. ԸՆԿՈՒԶԵԱՅ ԴՈՒՈՒ

Տարօնի ո. Առաքելոց վանքի լուսաւորչաշէն խորանի 775 տարուայ երկրիեղկեան սեաների, գեղաքանդակ ընկուղեայ դուռը:

Իւրաքանչիւր փեղկին տարածութիւնն է երկայն. 1,77, լայն 0,77մէթր, և հաստատութիւնն՝ 0,08մէթր: Ճակատնոցին մեծութիւնն է 1,30×0,37 մէթր: Իւրաքանչիւր կշտանոցին մեծութիւնն է 1,25×0,23 մէթր: Փեղկերու վերեւ կողմ գրուած է հետեւեալ հակիրճ յիշատակագիրը.

«Ի Թ. Զ. ԾԶԳ (583 551—1134). Ես Տէր Թորոս և Գրիգոր և Ղուկաս ԳԺ.

Փեղկերուն բազմանկիւն կիտուածանկարները նման են այն հատուածաքանդակին, զոր Մ. Բ. Քաղանովա պատկերացուցած է «Լոյս» պատկերազարդ շաբաթաթերթին մէջ(տես էջ 158): Բայց գծողաց հիանալի հանճարը կը փայլի մանաւանդ ճակատնոցի և կշտանոցներու կիտուածանկար ոլործուն ծաղկըներով զարդարուն 23 պատկերներում:

Ճակատնոցի Ա. պատկերն է Աղաւնի, Բ. ը՝ վահանաւոր լախտաւոր ձիաւոր, Գ. ը՝ ևս ձիաւոր, որ տէգով զարկեր ծակեր է զգլուխ վիշապի մը (Դ. պատկեր), որ պոչով պատած է զինքն ու զծին: Ե. ը՝ փողահար, երկար շորաւորիկ հալաւով, ասորահան կամ հայկական գտակով, և սունապաններով. Զ. ն ևս այրուծի, որ գեղարդով զարկեր ծակեր է զմէջը մի այլ լախտաւոր ձիաւորի (Ե. պատկեր). Ը. ը՝ այրադէմ հաւորի:

Աջ կշտանոցի Ա. պատկերն է կնադէմ բռնուն, Բ. ը՝ փղի նման, Եայց անկէ աւելի խոշոր կենդանի սուր ու թեկ կոտորով. Գ. ը՝ փիղ. Դ. ը՝ բնազանց. կենդանի, հիւսկէն եղջիւրով, և միջաց վրայ դարձած ձիազլխիկ տառնով. Ե. ը՝ ցլանման կենդանի, ուղղածիգ կոտորով. Զ. գովեռ. Ե. ը՝ կապիկ, որու գլխին եռաճիւղ թագ մը կայ:

Ձախ կշտանոցի Ա. պատկերն է Այծեամն. Բ. ը՝ եռ կամցիռ. Գ. ը՝ վագր, Դ. ը՝ ինձ, Ե. ը՝ ձի, Զ. ը՝ առիւծ, Ե. ը՝ շնագայլ, Ը. ը՝ բնազանց կենդանի—կեռակտուց:

Գ. ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ

Զանգակատան յիշատակագիր.—

«Ի ծայր թուոյս բառեակ տասին = 40

«Կոյսն էր ծնեալ ինոյն ամին

«Քառ յորելեան էր մայր սորին — 200

«Եւ գհայրն ասեմ տասն յորեւեանին» }
 «զարմանազան կրկնապատկին» }

— 1000

«Եղև շինումն զանգաղատան և

1240

«Իւր գաւթին,

«Բոլոր խցից չորեքհուսին

«Որ և ձեռամբ ձայնեղ դիտին

«Տ. Օհաննէս վարդապետին:

Ծանօթ. — Ըստ վերոգրեալ յիշատակագրի զանգաղատունը շինուած է 1240 տումարական թուականին հայոց, որ ցայժմ (1909) կընէ 118 տարի:

Տարօնեցի

9 Սեպտեմբեր | 909 ա. Առաքեալ

Ա Յ Լ Ե Ի Ա Յ Լ Ք

Հաբեցների նիստ ու կացից. — Հարէշների կամ եթովպացիներն թէ կրօնական ծիսակատարութեան և թէ առօրեայ նիստ ու կացի մէջ կան մեզ համար տարօրինակ առանձնայատկութիւններ: Անհետաքրքիր չի լինի թուել վերջիններից մի քանիսը: Նիգուսի կամ թագաւորի գահի պատուանդանի առաջ դրուած է լինում վագրի խրտուիլակ՝ նստած դիրքով. բացի սովորական սպառազինութիւններից գահի երկու կողմը կանգնած թիկնապահներից երկուսի ձեռին լինում է մաղէ ճանճաքշիկ, և նրանց պարտականութիւնն է ճանճերը քշել, որոնց անհամար բազմութիւնը մեծ ճանճրոյթ է պատճառում հարէշստանցիներին: Նոյնպիսի ճանճաքշիկներ ունին և քահանաները խաչի և աւետարանի վրայ նստած ճանճերը քշելու համար, որոնք նրանց կարծիքով պղծում են այդ սրբութիւնները:

Շատ պարզ են նրանց բնակարանները, ծածկը կազմուած է ձողերի վրայ հիւսած կոշա խոտից՝ թեք ձևով դասաւորուած, պատերի ուղղութեամբ տնկուած սիւնների վրայ, այդ բնակարանները մեծ մասամբ պատեր չեն ունենում և քիչ նման են լեռնաբնակների վրաններին. սեան կամ պատերի վրայ ի միջի այլոց կախուած են լինում հոտաւէտ իւղով լի կլոր ամաններ, այդ իւղով նրանք այնքան օծում են իրանց մաղերը, որ մինչև